ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՆԱԽԱԳԱՀ

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ http://www.competition.am

«04» 08 2022թ.
No 004062

«ՍՄԱՐՏ ՖԱՅՆՈՆՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՏԻԿԻՆ ՍՎԵՏԼԱՆԱ ԵՄԵԼՅԱՆՈՎԱՅԻՆ
(հասցե՝ ք. Երևան, Դավթաշեն Ձոր 2 թղմ., 34,
Էլ. փոստի հասցե՝ jor-93@mail.ru)

Հարգելի՛ տիկին Եմելյանովա,

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից թիվ ՀԳ-01488/22 վարույթի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկման անհրաժեշտությունից ելնելով և ղեկավարվելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ՝ **Օրենք**) 43-րդ հոդվածի 2-րդ մասով՝ խնդրում ենք սույն գրությունը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով ներկայացնել տեղեկատվություն.

1. «Սմարտ Ֆայնոնս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Սմարտ Ֆայնոնս» ընկերություն**), «Սմարտ Ֆայնոնս» ընկերության մասնակիցների և այլ փոխկապակցված անձանց և «Վան Քարտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **«Վան Քարտ» ընկերություն**) միջև կատարված գործարքների վերաբերյալ՝ կցելով համապատասխան փաստաթղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր և այլն) պատճենները,

2. «Սմարտ Ֆայնոնս» ընկերության, «Սմարտ Ֆայնոնս» ընկերության մասնակիցների և այլ փոխկապակցված անձանց կողմից «OneCard» բջջային հավելվածի ձեռքբերումը հիմնավորող փաստաթղթերի պատճենները,

3. «Սմարտ Ֆայնոնս» ընկերության և «Վան Քարտ» ընկերության միջև Օրենքի 4-րդ հոդվածով սահմանված անձանց խմբի հատկանիշների վերաբերյալ՝ առկայության դեպքում կցելով հիմքերը:

Տեղեկացնում ենք, որ.

1. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

2. Օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի հիմնավոր միջնորդության հիման վրա Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ սահմանված տեղեկատվության ներկայացման ժամկետը համապատասխանաբար կարող է Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ երկարաձգվել, և տեղեկատվությունը ենթակա է տրամադրման այդ ժամկետում:

3. Օրենքի 43-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից փաստաթղթեր, նյութեր և այլ տեղեկատվություն պահանջելու իրավաչափությունը տնտեսավարող սուբյեկտը կարող է վիճարկել միայն այն չտրամադրվելու դեպքում՝ Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոց կիրառելու մասին որոշման վիճարկման շրջանակում:

4. Օրենքի 93-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ենտեսավարող սուբյեկտի կողմից Հանձնաժողովի նախագահի գրությամբ կամ Հանձնաժողովի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր կամ այլ տեղեկատվություն սահմանված ժամկետում չներկայացվելու կամ ոչ հավաստի կամ ոչ ամբողջական տեղեկություններ ներկայացվելու համար նշանակվող տուգանքի չափը կազմում է մինչև հինգ միլիոն դրամ:

5. Վարչական վարույթով ապացույց կամ բացատրություն կեղծելու, փոխելու, ոչնչացնելու կամ թաքցնելու կամ կեղծ ապացույց ներկայացնելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 479-րդ հոդվածով սահմանված է քրեական պատասխանատվություն:

6. Վարչական վարույթով սուտ բացատրություն կամ սուտ ցուցմունք տալու համար ՀՀ քրեական օրենսգրքի 504-րդ հոդվածով սահմանված է քրեական պատասխանատվություն:

7. Հանձնաժողով փաստաթղթեր ներկայացնել և ստանալ, ինչպես նաև Հանձնաժողովի հետ հետագա ողջ հաղորդակցությունը կարող եք իրականացնել նաև առցանց՝ Հանձնաժողովի e-Compete էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով, որի համար անհրաժեշտ է գրանցվել Համակարգում՝ մուտք գործելով Հանձնաժողովի պաշտոնական կայքի (www.competition.am) «Իմ էջը» բաժին, ընտրելով «Գրանցվել» հրամանը և լրացնելով անձի նույնականացման համար պահանջվող տվյալները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**

Կատարող՝ Արմենուհի Թադևոսյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (245)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 16 սեպտեմբերի 2022 թվական: